

5977  
MEXICO

ՏՈՒՐԻԵՐՈՒ

ՆՈՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ

ЗАКОНЪ ЗА СЪБИРАНЕ НА ПРЪКИТЪ ДАНЪЦИ

Հնդումում է Ազգային ժողովի XIII սրահարգ  
ճիւղին մէջ եւ հրատարակում « Յարժավճա Վէպիբ » ի  
23 Մարտ համարով :

Այս կանոնագիրը գործադրութեան պիտի դրուի  
1906 էն սկսեալ :


ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆ

5977  
ՅԱՐՏԱՆԱՐ ԵՒԵԼԵԱՆ — ՎԱՐՆԱ

ПЕЧАТНИЦА „ОРИЕНТАЛЬ“ — ВАРНА.

1905



3 (4972)

# ՏՈՒՐՔԵՐՈՒ

## ՆՈՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ

### ՊՈՒԼԿԱՐԻՈՅ

ЗАКОНА ЗА СЪБИРАНЕ НА ПРЪКИТЪ ДАНЪЦИ

Ընդունուած է Ազգային Ժողովի XIII արակարգ  
ճիւղին մէջ եւ հրատարակուած « Յարժազնա Վէստի » ի  
23 Մտտ համարով :

Այս կանոնագիրը գործադրութեան պիտի դրուի  
1906 էն սկսեալ :

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

НБИБ  
КВИГООВМЕН

ՕՆՆԻԿ ԲԱՐՇՆՆՆՈՒՄՈՒՄ  
ОТЧИСЛЕНА

ՅՊԱՐԱՆ ԱՐԵՒԻԵԼԵԱՆ — ՎԱՍՆԱ  
ПЕЧАТНИЦА „ОРИЕНТАЛЬ“ — ВАРНА.

1905

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՄԱՐԿԱԿԱՆՈՒՄ

A // 61731

5649  
4504



## Ծ Ա Ն Ո Թ Ո Ի Թ Ի Ի Ն



Մեր ազգայինները իրենց անհոգութեանը կամ պուլկարերէն լեզուին ծանօթ չլինելուն պատճառաւ միշտ ֆեառներու կ'ենթարկուին: Այդ ֆեառներէն շատերը երկրին օրէնքները չի գիտնալէն յառաջ կուգան: Երբ տուրք ժողովոյ պաշտօնեան կուգայ, մեր հայ խանութպանը, սրճատարորը կամ նոյն իսկ վաճառականը չի գիտեր թէ այդ մարդը ինչ բան իրաւունք ունի պահանջելու եւ կամ բոլոր բաժները օրէնքի համեմատ են: Մանաւանդ գիւղերու մէջ շատ անգամ եղած է որ մեր ազգայինները պաշտօնեաներու անկարգութեանց պատճառաւ անգամ մը վճարած տուրքերնին նորէն վճարելու ստիպուած են, կամ իրենց պարտական չեղած տուրքերը տուած են:

Այս անգամ մեր ազգայիններուն զիւրութիւն մը տալու համար, տուրքերու նոր կանոնագրին էն կարեւոր մասերը ելեւմտական նախարարութեան կողմէ ցրուուած № 2345 յայտարարութեանէն թարգմանելով կը հրատարակենք: Այս տեարակը անբաժեշտ է որ ամէն մարդ իր գրպանը ունենայ, որպէս զի ցուցունէ եկող պաշտօնեային երբ մէջերնին վէճ մը ծագի, եւ վստահ ենք որ մեծ օգուտներ պիտի տայ մեր արհեստաւորներուն եւ մանաւանդ գիւղի խանութպաններուն: 20 սանդիմը խնայելու համար այս առիթէն օգտուիլ չուզողները, անշուշտ օր մը անոր ֆեառը պիտի քաշին:

Երբ տեսնենք որ մեր ազգայինները իրենց օգուտը

կը հասկնան եւ զսնէ մեր ծախքերը գոցելու չափ կըսպառեն այս տևարակը, այն ատեն մտադիր ենք հրատարակել նաև խանութպանութեան, արհեստաւորութեան կամ ծառայութեան մասին ալ գտնուող կարեւոր օրէնքները, որպէս զի նոր խանութ բացող կամ խանութը փոխադրող կամ փակողները գիտնան թէ ի՞նչ ձևահերպուսթիւններ կան ընելու եւ յետոյ տուգանք չի վճարեն:

Կարգալ գիացողներուն պարտքն է այս գրքոյկին պարունակութեան ծանօթացնել իրենց տղէտ դրացիները:

Աշխատած ենք էն պարզ լեզուն գործածել որպէս զի ամէն մարդ հասկնայ: Տեղ տեղ պուլկարերէն կամ տաճկերէնը դրած ենք:

ՀՐԱՏԱՐԱՆԿԷ

# ՏՈՒՐՔԵՐՈՒ ԿԱՆՈՆԱԳԻՐ

Յօդ. 1 — Պիրնիկներուն պաշտօնը միայն տուրք հաւաքելն է, հետեւաբար իրաւունք չունին տուրք սրոշելու: Տուրքի մասին պիրնիկին հետ ու է վիճարանութիւն չըլլուիր: Վէճի մը դոյութիւնը տուրքին գանձումը եւ չի կրնար ձգել: Ապօրինի կերպով գանձուած տուրք մը ստուգուելէ ետքը վճարողին կը վերադարձուի, եթէ անիկա այդ տուրքը վճարած օրէն մինչեւ մէկ տարուան մէջ աւանց դրոշմաթուղթի (կերպովա մարքա) աղերսագիր մը տայ Ֆինանսով Նաչալնիկին: Եթէ մէկ տարին անցնի, դրամը եւ չի տրուիր:

Յօդ. 2 — Հողային (բողէմէլէն), շէնքերու (սկրատի), բաթէնթի, զինուորական և ճամբու տուրքերը (վօէննի ի բաթնի) երեք մասէն պիտի վճարուին և ոչ թէ երկու մասէն ինչպէս որ էր մինչեւ հիմայ, հետեւեալ կերպով. — Մ.աջին մասը է՛ն ուշ մինչեւ Մայիս 1 պէտք է վճարուի, — երկրորդը՝ մինչեւ Սեպտեմբերի վերջը, — իսկ երրորդը մինչեւ Դեկտեմբեր 1:

Պէլլիկը\* մէկ անգամէն պիտի վճարուի, քաղաքներու մէջ մինչեւ Մայիս 1ը, է՛ն ուշ, իսկ գիւղերու մէջ պիրնիկին գալէն երկու օր ետքը, ինչ որ պիտի ըլլայ Ապրիլ 10էն վերջը:

(\*) Պէլլիկ (էօշիւր), կենդանիներու համար վճարուելիք տուրք:

Յօդ. 3 — Ճամբորդ կամ հաստատուն բնակավայր մը շունեցող մարդոց բաթէնթի և ճամբու տուրքերը մէկ անգամէն կը վճարուին պիրնիկին կամ Ֆինանսով ալէնդին: Ով որ իր կամքովը չի վճարեր, բռնի կառնուի առանց ուշացնելու:

Յօդ. 4 — Օրէնքին որոշած ժամանակներուն մէջ չի վճարուած տուրքերը, ուշացած կը սեպուին, ու անոնց համար տուգանք (կրօպա) կառնուի: Պէյլիկի համար, եթէ տարուան մինչեւ Յուլիս 1 չի վճարուի, տուգանք կառնուի:

Երբ մարդու մը, պէյլիկէն զատ, տարեկան ընդամէնը վճարած տուրքին գումարը 1 լէվէն մինչեւ 99 լէվ 99 սնթմ. կը հասնի,  $\frac{0}{10}$  3 տուգանք կը վճարէ: 100 լէվէն վեր եղածին պէս,  $\frac{0}{10}$  5 տուգանք կը վճարէ: Ուշ մնացած տուրքերը բռնի կերպով կը գանձուին:

Յօդ. 5 — Մինչեւ այս 1905 տարուան վերջը տուրքը առաջուան պէս պիտի գանձուի, պիրնիկէն քվիթանձիա տրուելով: Բայց 1906էն սկսեալ ամէն տուրք վճարողի մէյմէկ տեարակ պիտի տրուի, ուր պիտի նշանակուին իր պարտական եղած տուրքերուն գումարները և վրադիրները (տուգանքները): Ամէն անգամ պիրնիկին տուրք վճարուելուն պէտք է անպատճառ անոր ցուցնել տուրքի տետրակը և նշանակել տալ արուած գրամը: Այնպէս որ 1906 էն սկսեալ ամէն մարդ ձեռքը պիտի ունենայ իր տուրքերուն



տետրակը, ուրկէ ինքնիրեն սլիախ գիտնայ թէ  
ե՛րբ և ո՛րքան տուրք կամ վրացիր պարտք ունի,  
ե՛րբ և ո՛րքանը վճարուած է պիրնիկին ու  
ո՛րքան դեռ պարտքը կը մնայ :

Տուրքի տետրակը 20 սնթմ. կարժէ : Մինչեւ  
փետրուար 1 տետրակ չառնողը, պարտաւոր է  
ի՛միտայն պիրնիկին քով փնտոել զայն :

Յօդ. 6 — Տուրքերը վճարողին կամ քլիթան-  
ձիա կը արուի և կամ տետրակին մէջ կը նշանակ-  
ուի : Այս երկուքէն զատ տուրքը վճարած ըլլալդ  
հաստատելու համար ուրիշ ո և է տօքսմէնդ-  
չընդունուիր :

Յօդ. 7 — Ով որ իր տետրակը կորսնցնէ,  
կրնայ պիրնիկէն ուրիշ մը ստանալ, վճարելով  
20 սնթմ. արժէքը և վրան փակցնելով 50 սնթմ. ի  
գրոշմաթուղթ (կերպովա մարքա), որուն վրայ  
պիրնիկին կնիքը կը կոխուի :

Յօդ. 8 — Տուրքերը քաղաքներու մէջ անպատ-  
ճառ պիրնիկին պաշտօնասեղիին մէջ (քանձե-  
լարիա) պէտք է վճարուին, իսկ գիւղերու մէջ  
ուր որ պիրնիկը հաստատուի :

Յօդ. 9 — Տուրքի համար գրաւուած (սէք-  
վէսթրօ) առարկաները կը ծախուին, քաղաքներու  
մէջ՝ գրաւուելէն 24 ժամ ետքը, իսկ գիւղերու  
մէջ՝ 48 ժամ, եթէ մինչեւ այդ առան տուրքը  
պիրնիկին չի վճարուի :

Յօդ. 10 — Մեծ քաղաքներու մէջ երկու տեսակ

պիրնիկ պիտի գանտի, մէկը՝ որ տուրքերը պիտի դանձէ իր պաշտօնատեղիին մէջ և միւսը՝ որ բռնի գանձումներով (իծրտ) պիտի դրաղի և պիտի կոչուի պիրնիկ-էքզէքութօր։ Այս վերջինը կարմիր ծանուցադիրներով (իզվէսթիէ) ելեք օրուան պայմանաժամէն ետքը չի վճարուած դրամները բռնի պիտի դանձէ։ Պիրնիկ-էքզէքութօրներուն արդիւուած է տուրք վճարողէն դրամ առնել պարտքին հաշոյն։ Տուրքը միմիայն պիրնիկին պաշտօնատեղիին մէջ (քանձեւարիան) կը վճարուի։

Յօդ. 11 — Երրորդ անձնաւորութիւն մը (թրէթի լիճա), որուն քով պիրնիկը յանձնած է ուրիշին հաշոյն դրուուած (զարօր) դրամը կամ առարկան, եթէ պիրնիկին չի յանձնէ զանոնք, պատասխանատու կը մնայ ու մինչեւ 500 լէվ առգանքի կը դատապարտուի։

Յօդ. 12 — Օրէնքին մէջ սրոշ կերպով նշանակուած պարտգաներէն դուրս, ոչ մէկը և ոչ մէկ միջոցով չի կրնար ուշ մնացած տուրքի մը վճարումը յետաձգել։

Յօդ. 13 — Ընկերութեամբ եղած գործերու կամ կարուածներու, ինչպէս նաև դեռ չի բաժնուած ժառանգորդներու կարուածի տուրքերը իրենց համերաշխութեամբ կը վճարուին։

Յօդ. 14 — Կառավարական, նահանգային և թաղային պաշտօնեաներն ու ծառայողները, առանց բացառութեան, եթէ վերի ցոյց տրուած

պայմանաժամներուն մէջ չի վճարեն 1905 տար-  
ուան սուրբերնին կամ առաջուրնէ ունեցած  
պարտքերնին, չեն կրնար իրենց ամաթոշակը  
ստանալ :

Յօդ. 15 — Հանդստեան թոշակ աւնողները,  
(բէնսիօնէր) վերի օրէնքներուն ցուցուցած ժա-  
մանակներուն մէջ եթէ իրենց սուրբերը չի վճա-  
րեն չեն կրնար իրենց թոշակը ստանալ մինչեւ որ  
հաշիւնին չի կարգադրեն պիրնիկին հետ :

Յօդ. 16 — Ով որ կառավարութենէն, նահանգ-  
ներէն կամ թաղապետութիւններէն առնելիք մը  
ունի աւարտած մէկ դործին, կարուածուկան և այլ  
վարձքի կամ ո և է մէկ հոյթոյթումի (միւլպայեա)  
մը համար, չի կրնար դանձման հրամանը ընդունիլ,  
մինչև որ իր սուրբերը վճարած ըլլայր չի հաստատէ :

Յօդ. 17 — Ով որ օգելից ըմպելիքի (իչկի, ըս-  
րիթնի բիթիէթա) առուտուրով կը զբաղի մեծա-  
քանակ կամ փոքրութեան (էարօ իլի սրէպիօ)  
պէտք է որ նախ և առաջ վճարէ իր յետամնաց  
(պագըր,է) սուրբերը և այս մասին քննիչ պաշաօ-  
նէութեան (քօնթրօլթվօ) վկայույ իր մը նեկայացնէ :  
Եթէ տսիկա չընէ, չի կրնար իր բովէնիլը ստանալ :

Յօդ. 18 — Ով որ պիրնիկի մը իրաւասութեան  
չըջանէն սրիչ պիրնիկի մը կանցնի ա իր բնա-  
կութիւնը հոն կը հաստատէ, պէտք է իր առաջ-  
տան պարտքերը վճարէ և իր սեղափոխութիւնը

խմացնէ թէ՛ աւաջուան պիրնիկին և թէ՛ նոր գացած տեղի պիրնիկին :

Յօդ. 19 — Պիրնիկներու ձեռքով հաւաքուած տուրքերը, ինչպէս նաև նահանգային, թաղապետական կամ առեւտրական սենեակներու (թրկովըսքա քամարա) կողմէ առնուած տուրքերը, միշտ ուրիշ տեսակ առնելիքներու վրայ առաջնութիւն (բրիվիլէկիա) ունին :

Յօդ. 20 — Անշարժ կալուած մը ձեռքէ հանելու կամ դրաւի դնելու ատեն, կալուածին տէրը պարտաւոր է թէ՛ իր մինչեւ տարւոյն վերջը ունեցած տուրքերը և թէ՛ ձեռքէ հանած կալուածին ամբողջ տարեկան տուրքը վճարել : Մինչեւ որ այդ տուրքերը չի վճարուին կալուած մը ոչ ձեռքէ կարելի է հանել և ոչ ալ դրաւի գնել (իրօթէքա) :

Միևնոյն վճարումները կը լլան նաև, երբ անշարժ կալուած մը գործադիր պաշտօնեային ձեռքով (սատէպէն բրիսթալ, իճրա մէմուրը) կը ծախուի :

Ուն նօթարիտուսները կամ գործադիր պաշտօնեաները (սատէպէն բրիսթալ) որոնք չեն կատարեր տուրքերու օրէնքին պահանջած այս ձեւակերպութիւնները, անձնապէս պատասխանատու կը մնան գանձային պաշտօնեային (խաղինէ) :

Յօդ. 21 — Իսլամներու համար որոշուած զինուորական տուրքը կերպաշխատորուի հարկատուին (վէրկի վէրէն) կամ անոր ծնաղքին անշարժ կալուածներովը : Հետեւաբար իսլամներու կալուածներ

րը, որոնք զինուորական տուրքին երաշխաւորու-  
թիւնը կը ներկայացնեն, ձեռքէ չեն կրնար հան-  
ուիլ, մինչեւ որ աէրերը զինուորական տուրքը  
չի վճարեն: Այսպէս, ով որ անոնցմէ կալուած կը  
դնէ, պէտք է ստուգէ (թաստիգ) թէ ծախողը զին-  
ուորական տուրքը վճարած է թէ պարտական է:

Յօդ. 22 — Վարձքով անշարժ կալուած մը (միւլք,  
էմիլայի զայրի մենդուլէ) բռնողը, առանց պիրնի-  
կէն ծանուցագրի (բօքանա) սպասելու, պէտք է  
վճարէ վարձած կալուածին տուրքերը կալուա-  
ծատիրոջ հաշույն և անոր վարձքի դրամին տեղ  
ընկալագիրը (քվիթանձիա) ապա: Եթէ կալուա-  
ծատէրը (մալասհիպի) ժամանակին իր տուրքերը  
վճարած է, յայտնի է որ վարձակալը (քիրաճի)  
ոչինչ չի պիտի վճարէ: Եթէ ո՛չ կալուածատէրը  
իր տուրքը վճարած է և ո՛չ ալ վարձակալը իր  
վարձքերը ժամանակին վճարած է, այդ պաշա-  
դային պիրնիկը իրաւունք ունի վարձակալէն բռնի  
(ճէպրէն) չի վճարուած դումարը դանձելու:

Կալուածատէրը, առանց ու է դիտողութեան  
պարտական է դրամի տեղ ընդունիլ վարձակալի  
կողմէ իրեն սրուած ընկալագիրը:


Յօդ. 23 — Երկու ամիսէն ուելի սպասաւոր  
սպասուհի, աշկերտ, վարպետ (քալֆա) և իրենց  
ժառայութեան համար ուրիշ անձեր պահողները,  
պարտաւոր են անոնցմէ տուրքերնին վճարած  
ըլլալուն համար ընկալագիր պահանջելու, և եթէ

չեն վճարած պէտք է զրկեն որ վճարեն: Եթէ ծառայողները չի վճարեն իրենց տուրքը, անոնց տէրերէն կը դանձուի, որոնք դրամի տեղ տուրքի ընկալագիրը կուտան իրենց ծառաներուն: Ծառաներն ալ դրամի տեղ պէտք է ընդունին այդ ընկալագիրը առանց ո եւ է առարկութեան (պիլա [սիլաֆ], [թ]): Ով որ այս օրէնքը չի գործադրեր պիւրնիկին առջեւ անձնապէս պատասխանատու (լիչնօ օթկովուճի) կը մնայ իր ծառաներուն տուրքերուն համար:

Յօդ. 24 — Ով որ դատարանական հրամանով ծախել տուած մէկ առարկային դրամը գործադիր պաշտօնետյէն (սատէպէն) բրիսթավ գանձելու կերթայ, պէտք է նախ սլիրնիկին երթայ իր տուրքերը վճարելու և առած ընկալագիրները պէտք է ցուցնէ գործադիր պաշտօնետյին: Մինչև որ այս թուղթերը ձեռքը չունենայ, պաշտօնետն իրեն դրամ չի վճարեր:

Յօդ. 25 — Պիրնիկները, եթէ սխալ մը գործեն, անկարգութիւն, զեղծում կամ ուրիշ սպօրինութիւններ ընեն իրենց պաշտօնին մէջ, 5էն 500 Ֆրանք տուգանքի (կլօպա) կը դատապարտուին:

Փափաքելի է որ բոլոր տուրք վճարողները այս վերի կանոնները ըստ գիտնան, որպէս զի դժուարութիւններու չի հանդիպին և պաշտօնետներէն չի չարչարուին:



Пров. 1957 г.

# ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

—\*— Վ. Ա. Ռ. Ն. Ա. —\*—

ИЗДАТЕЛЬСТВО  
ОРИЕНТАЛЪ  
НА  
О. ПАРСЕХЯНЪ  
ВАРНА

IMPRIMERIE ORIENTALE  
DE  
O. PARSEGHIAN  
VARNA (Bulgarie)

կը ապագրուին հայերէն, սլովակարերէն, գաղղիերէն, անգլերէն, ֆրանսերէն, իտալերէն, ռուսերէն, սերբերէն, քրիստոնէսական հրատարակչութիւն, ազգաբնակչութիւն, պարտամուտի համար, նամակագրութիւն, պահարան, մահազգ, վաճառականական ամէն տեսակ գործեր, գիրք, լրագիր եւ այլն:

**ՄԵԾ ԽՆԱՄՔ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ  
ՊԻՆԵՐԸ ՅՈՅԹ ԳԻՒՐԱՄԱՏՅԵԼԻ**

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ նետուեալք եւ փութով կը կատարուին:

Կը ծախուին Արեւելեան Տպարանէն լոյս տեսած հետեւեալ գիրքերը՝

## ԱՆՁՆԱՍՊԱՆ ՄԵՌԵԱԼԸ

Հեղինակութիւն ՌԸՆԵ ՏԸ ԲՕՆ-ԺԵԵ, 208 էջ Գին 1,50 Ֆր.

## ԱՆԻԾԵԱԼ ՊԱՆԴՈԿԸ

Հեղինակութիւն ԼՈՒԻ ՆՈՒԱՌԵ, 442 էջ բաղկացեալ, Գին 2,50 Ֆր.

## ՇՈԳԵԿԱՌՔԻՆ ՈՃԻՐԸ

Պատկերազարդ, Հեղինակութիւն ԺԻԻԼ ՄԱՐԻԵ, 408 էջ, Գին 3 Ֆր.

## ՊԱՏՈՒՀԱՆԻՆ ՄՈՒՐՀԱԿԸ

Թատերադրութիւն 7 արար, Պօլոյ կեանքէ քաղուած, Գին 80 սանթ.

[504.]

A ii  
61739

**Գին 20 սանթիմ:**

վառնայէն դուրս, Գուկարիոյ ուրիշ քաղաք-  
ներու կամ գիւղերու համար պէտք է աւելցնել  
5 սանթիմ փոսթի ծախք: Դրամի փոխարէն հինգ  
սանթիմնոց նամակագրոջմ ալ կ'ընդունուի:

ԳԱՍ Գիմնարար Գիտ. Գրադ.  
  
220061739